

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի, 2020 N 49

ՏՆՏԵՍՎԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ կետերով և հրամանագրի հավելվածի 27-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Արցախի Հանրապետության ոստիկանության ծառայողների կողմից 2020 թվականի հուլիսի 27-ին իրականացված մշտադիտարկման արդյունքում կազմված արձանագրությունը՝ **որոշում եմ**.

1. 72 ժամով արգելել «Իսահակի աղբյուր» ՍՊԸ (ՀՎՀՀ 90033861) ռեստորանային համալիրի գործունեության ծավալումը:

2. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել տնտեսվարողին սույն որոշման մասին տեղեկացումը և որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ